ԱՐՈՒՍՅԱԿ ՇԻՐԻՆՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՒՅԹՆԵՐԸ Ս.ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ՈՍԿԵՓՈՐԻԿ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i68.156

ԱՄՓՈՓՈՒՄ

Փիլիսոփայության և աստվածաբանության հիմնարար կարգույթներից մեկը ժամանակի ընկալումն է: Հայ փիլիսոփայական և աստվածաբանական ավանդույթների ուրվապատկերում հայեցակարգային առումով այդ նյութը մնում է քիչ ուսումնասիրված: Հայ միջնադարյան մտածողների ժառանգությունը ժամանակի հայեցակարգերի վերաբերյալ թեև աննշան է, բայց մինչ օրս գրեթե անտեսված է հետազոտների կողմից, ինչի պատճառով այն դուրս է մղվում ժամանակի խնդրի վերաբերյալ աշխարհիկ խոսույթի զարգացման ընդհանուր պատմությունից, և մեծ մասամբ ուղղակի կասկածի տակ է դրվում ազգային հատկանիշների ու ավանդույթների առկայությունը: Այս իրավիճակի արդյունքում հայ միջնադարյան փիլիսոփայության մեջ ժամանակ և հավերժություն հասկացությունները երկար ժամանակ չեն դիտարկվել կամ ուսումնասիրվել որպես միջնադարյան փիլիսոփայության ինքնուրույն գիտակարգ, այլ միայն հիշատակվել են որպես աշխարհի պատկերը կերտելու լրացյալ միջոց: Հոդվածը նվիրված է հայ միջնադարյան փիլիսոփա-աստվածաբան Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ» աշխատության մեջ շարադրված ժամանակի և հավերժության մասին պատկերացումների հիմնական կողմերի բացահայտմանը և դիտարկմանը: Հոդվածում փորձ է արվում հավերժության և ժամանակի տրամաբանական և փիլիսոփայական վերլուծության հենքի վրա ուրվագծելու հիմնական խնդիրները: Ներկայացված է հայ միջնադարյան փիլիսոփայության ժամանակի և հավերժության կարգույթների վերաբերյալ կապը անտիկ

փիլիսոփայական ավանդույթի և միջնադարի արևելյան քրիստոնեական ավանդույթի հետ: Փիլիսոփայությունը և աստվածաբանությունը, փոխհատվում են այս աշխատությունում, որտեղ ժամանակն ու հավերժությունը Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ» աշխատության մեջ վերլուծվում են գոյաբանության տեսանկյունից և փորձ է արվում ցույց տալ դրանց արժեքաբանական ուղղվածությունը:

Բանալի բառեր և արտահայտություններ. *Գր. Տաթևացի, հավերժություն, ժամանակ, գոյաբանություն, արժեքաբանություն, արիստոտելականություն, նորպլատոնականություն, հայրաբանություն, հայ միջնադարյան փիլիսոփայություն, գիտություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի ուսումնասիրությունը բարդ և բազմակողմանի խնդիր է, որն ազդում է գիտության տարբեր ոլորտների վրա. ֆիզիկայի, հոգեբանության մշակութաբանության, փիլիսոփայության և աստվածաբանության Ժամանակի ուսումնասիրության փիլիսոփայական և աստվածաբանական մեթոդներն ուղղված են ժամանակի ըմբռնման և դրա սահմանման իմացաբանական, գոյաբանական, արժեքաբանական, ֆենոմենոլոգիական, բարոյաբանական և այլ եղանակների ուսումնասիրմանը: Յուրաքանչյուր դարաշրջան ժամանակի կոնկրետ տեսլականով առանձնանում է գիտելիքները սերնդեսերունդ փոխանցելու յուրահատուկ փորձով **(Шпенглер О., 1998)**:

Չնայած այն հանգամանքին, որ ժամանակի և հավիտենության հասկացություններն առանցքային դեր են խաղում ինչպես փիլիսոփայության, այնպես էլ աստվածաբանության մեջ, հայ միջնադարյան փիլիսոփայությունը, ունենալով V-XIV դարերն ընդգրկող մտքի հարուստ պատմություն, հայեցակարգային առումով ամբողջությամբ չի մոդելավորվել ժամանակի ընկալման հարցում և մնում է քիչ ուսումնասիրված: Այս հարցի ուսումնասիրության համար նյութի ընտրությունը հղի է որոշակի դժվարություններով, թեև, իհարկե, միջնադարյան հայ փիլիսոփաները

մտաբերում էին, թե ինչպես կարող է անփոփոխ Աստված փոխազդել աշխարհի հետ, ազդել պատմության վրա, նաև խորհում էին ժամանակի հանդեպ Աստծո վերաբերմունքի մասին՝ դրանից եզրակացություններ անելով:

Այս հոդվածում կքննարկվի Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ» փիլիսոփայական-աստվածաբանական աշխատությունը, որը Հայ Առաքելական եկեղեցու աստվածաբանական ուսմունքի ամբողջական շարադրանքն է, որտեղ ժամանակի հասկացությունը կարելի է դիտարկել հավիտենության և ժամանակի զարգացման և կատարելության, մարդկային կարգուկանոնի, Աստվածային մտադրության և ստեղծագործականության, թվի և կատարելության մասին կրոնափիլիսոփայական մտորումների համատեքստում: Այստեղ ժամանակն ու հավիտենությունը հիմնականում դիտարկվում են գոյաբանության և դրանց արժեքաբանական ուղղվածության տեսանկյունից: Անհերքելի փաստ է, որ Տաթևացու ուսմունքը հիմնված է Արիստոտելի գաղափարների վրա, ով իր հերթին սեփական եզրակացությունների զգալի մասին հանգել է Պլատոնական երկերի, ինչպես նաև աստղագիտական և մաթեմատիկական գիտությունների վերլուծության միջոցով՝ հիմնվելով այութագորյան ավանդույթների վերաբերյալ ձեռք բերված գիտելիքների վրա՝ ընդամին զարգացնելով սեփական հայացքները: Չնայած այն հանգամանքին, որ ժամանակի մասին անտիկ, փուլային պատկերացումները և քրիստոնեության մեջ պատմական ժամանակի մասին պատկերացումները, որոնք կապված են Սուրբ Գրքի պատումի հետ, որոշակի դժվարություններ են ստեղծում քրիստոնեության ժամանակային գաղափարները անտիկ գաղափարների հետ կապելու հարցում, միևնույն ժամանակ, նրանց միջև այնուամենայնիվ գոյություն ունի որոշակի համաձայնություն, որը գտնվում է այլ՝ գոյաբանական հարթության վրա. անտիկ միտքը, լուծելով աշխարհի միասնության և բազմազանության խնդիրը, տրամաբանորեն առաջ է քաշում կեցության նվիրապետության գաղափարը՝ դրանով իսկ ներմուծելով բացարձակի գաղափարը որպես մեկ գոյության սկզբունք, և միայն քրիստոնեությունն է տրամաբանորեն ձևակերպում և վերջնականորեն ավարտում

Բացարձակի հանդեպ գերվերացական աշխարհի այս գաղափարը: Անդրանցականության վերաբերյալ որոշ անտիկ կանխադրույթների աստիճանական կիրառումը գոյաբանության մեջ որոշում է միջնադարյան ուսմունքի ողջ առանձնահատկությունը ժամանակի և հավիտենության հիմնական գոյաբանական կարգույթների մասին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության մեջ կիրառվել է համեմատական-վերլուծական մեթոդ՝ բացահայտելու Գրիգոր Տաթևացու մոտ ժամանակի արիստոտելյան և գիտական ըմբռնման տարբերությունները, ինչպես նաև պատմաբանասիրական մոտեցում՝ վերլուծել աղբյուրները և տերմինաբանությունը: Հերմենևտիկ մեթոդը թույլ է տալիս ուսումնասիրել նրա ժամանակի հայեցակարգի և աստվածաբանական ավանդույթի կապը, իսկ համատեքստային վերլուծությունն օգնում է՝ որոշելու բյուզանդական մտքի և հայկական սխոլաստիկայի ազդեցությունը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայ միջնադարյան քրիստոնեական աշխարհայացքում միասնության և բազմազանության խնդիրը, լինելով նաև գոյաբանության մեջ առանցքային, լուծվում էր Աստծո Միասնության մեջ, որտեղ հավիտենությունը Նրա հատկանիշն է: Նյութը ստեղծվել է Աստծո կողմից, և համապատասխանաբար աշխարհի ողջ բազմազանությունը Աստծո արարչական ջանքերի արդյունքն է. «..Բոլոր բազմությունները մեկից են կազմվում, ինչպես տեսակը՝ անհատից, գիծը՝ կետից և թվերի բազմությունը՝ մեկից: ... Հարկավոր է այսպիսի միակ, որ բոլոր բազմությունների և միակների միակն է, որ Աստված ինքն է» (**Քյոսեան Հ.,1995**): Հայ փիլիսոփայության մեջ Բացարձակի գերվերացականության գաղափարը ձևակերպվել է կեղծ Դիոնիսիոս Արեսպագեցուց վերցված գաղափարի շնորհիվ և ընդհանրապես նորպլատոնականության մեջ, որտեղ անդրանցականը գոյության բարձրագույն աստիճանն է: Քրիստոնեության մեջ անդրանցականության սկզբունքն իր արտահայտությունն է գտնում երկու նոր գաղափարների մեջ, որոնք հայտնի չէին անտիկ դարաշրջանում աշխարհի ստեղծման և աշխարհի սկզբի

մասին, բայց քանի որ այդ գաղափարները բնազանցական են և ոչ կրոնական, սա հնարավոր է դարձնում փիլիսոփայական բնազանցության և էքսեգետիկ հերմենևտիկայի փոխներհյուսելը (**Зима В., 2008**):

Գր. Տաթևացու «Ոսկեփորիկ» աշխատության մեջ հստակ երևում են անտիկ փիլիսոփայությունն աստվածաբանության հետ փոխներհյուսելու հեղինակի ջանքերը: Այս աշխատության գլուխներից մեկում Տաթևացին խոսում է Աստծո ճանաչման հինգ ուղիների մասին, որոնց հիմնադրույթները բնափիլիսոփայություն են և շատ առումներով համահունչ են Արիստոտելի «Մետաֆիզիկա» աշխատության մեջ զետեղված փիլիսոփայական ուսմունքին, որտեղ, ըստ Տաթևացու, անձը կարողանում է գիտելիքներ ձեռք բերել Աստծո մասին՝ հենվելով զգայական փորձի և նրա բանական ըմբռնման վրա, բայց վարդապետական աստվածաբանության օգնությամբ: Վերաիմաստավորելով հավերժական շրջանառության հնագույն գաղափարը՝ միջնադարյան միտքը գոյությունը տեսնում է ներդաշնակված կարգով, որը կապված է Աստծո մասին պատկերացումների հետ: Գր. Տաթևացին յուրօրինակ կերպով համատեղում է աշխարհի հավերժության գաղափարը արիստոտելյան գաղափարի հետ, բայց ժխտում է նրա դիրքորոշումը աշխարհի չստեղծման և նյութի ու Աստծո հավերժության մասին, թեև չի պնդում, որ արարված աշխարհը հավիտենական չէ: Աշխարհը՝ որպես աննյութական ուրվապատկեր, որը գոյություն ունի Աստծո ծրագրում, եղել և գոյություն է ունեցել դեռևս մարդու արարումից առաջ. «Աստված արարիչ է երկու աշխարհների՝ հրեշտակների հավիտենության և մարդկանց ժամանակների»: Աստված ժամանակն ստեղծեց ոչնչից, իր հերթին՝ գերվերացական հավերժությունը, որպես Աստծուն պատկանող անհրաժեշտ էություն, երբեք չի վերածվում չգոյության. «Աստծուն է հատուկ լինել Հավիտենական և անփոփոխ» (**Ոսկեփորիկ, 1746**): Արիստոտելն ապացուցում էր Աստծո գոյությունը ժամանակի վերլուծության միջոցով: Ժամանակը չի կարող սկիզբ ունենալ, քանի որ ամեն «հիմա» ենթադրում է «առաջ», և քանի որ ժամանակը շարժվում է «նախքան» «հետո» –ից, ուրեմն շարժումը պետք է

հավերժական լինի: Ուստի իրականությունը միշտ եղել է, բայց ստեղծագործություն չի եղել (**Fuller B. A. G., 1907**): Աստված նրա համար հավերժական, անշարժ և աննյութական առաջնորդն է: Նա մաքուր, փաստացի ձև է, բացարձակապես պարզ և անփոփոխ, որի էությունը դեպի իրեն ուղղված մտածողությունն է (**Закарян С., 2017**):

Հավերժության մեջ, ինչպես ասում է Տաթևացին, կա անդրանցական ժամանակ, որը ենթադրում է նրա մեջ գործընթացի բացակայություն. «...այլև որ լոկ Աստծո լինեությունն է կատարյալ: Եվ սրա պատճառն այն է, որ նախ՝ կատարյալ է, որ իրենից դուրս ոչինչ չունի, մինչդեռ մեր էությունն իրենից դուրս իրողություններ ունի, այդ պատճառով կատարյալ չէ: Որովհետև մեր պակասավոր լինելության մեջ կա բան, որ անցյալ է, և կա, որ լինելու է, բայց Աստծո լինեությունն համահավասար է, քանզի Նրա [համար] չկա բան, որ անցյալ լինի, և չկա բան, որ լինելու է, այդ պատճառով հույժ կատարյալ է» (**Ոսկեփորիկ, 1746**): Աստվածաբանը հավերժությունը բաժանում է չորս կարգույթների[1]. «Իմանալու է, որ հավիտենությունները չորսն են. նախ այն, որ ոչ սկիզբ ունի և ոչ վերջ, երկրորդ՝ որ չունի սկիզբ, բայց ունի վերջ: Եվ թեպետ որոնք հավասարապես հավիտենություններ են կոչվում, բայց ունեն հատուկ անուններ. առաջինը հարաձգական հավիտյան, երկրորդը՝ սկզբնական հավիտյան, երրորդը՝ միշտ հավիտյան, չորրորդը՝ ժամանակային հավիտյան» (**Ոսկեփորիկ, 1746**): Այս ըմբռնման հիմքը Սուրբ Գիրքն էր, որը ոչ միայն Աստծուն է կոչում հավիտենական, այլև անտեսանելի հրեշտակային աշխարհը[2], Բարսեղ Մեծի հավերժության ըմբռնումը, որը կտրուկ գիծ անցկացրեց ստեղծված հավերժության և Աստվածային հավիտենության միջև: Հրեշտակների ստեղծած հավերժությունը համարժեք է ժամանակին, իսկ Աստծո հավիտենությունը անդրանցական է. նշենք նաև Դիոնիսիոս Արեոպագացու ըմբռնումը, ով

[1] Իր հերթին Տաթևացին մյուս աշխատության՝ «Գիրք հարցմանցում» ժամանակը բաժանում է երեք մասի: «Ժամանակն է ներքոյ երկնից եւ ի միշտն վերայ երկնից եւ յաւիտեանն ի վերոյ քան երկինս» (**Գիրք հարցմանց, Երուսաղեմ, Տպարան Սրբոց Հակոբեանց, 1993, էջ 116**):
[2] Ըստ Աստվածաշունչ մատյանի (Բ Կորնթացիս 4:18):

ժամանակի և հավերժության հասկացությունը բաժանեց երեք կարգույթների, որտեղ առաջինը նյութական՝ անցյալ, ներկա և ապագա ունեցող ժամանակն է, երկրորդը՝ արարված հավերժությունը, էոնը, որն ունի սկիզբ և պահպանում է զարգացման հնարավորությունը, իսկ երրորդն անսկիզբ է և կիրառելի է սկիզբ չունեցող Աստվածային գոյության դեպքում (**Зайцев А., 2022**)

Հարկ է ուշադրություն դարձնել այն փաստին, որ Տաթևացին հավերժություն հասկացության մեջ օգտագործում է նվիրապետության որոշակի ձևերի անկախ բնութագիր, չնայած այն հանգամանքին, որ ինչպես անտիկ, այնպես էլ միջնադարյան փիլիսոփայության մեջ կային հավերժության և ժամանակի առանձին կարգույթներ՝ հասկանալու մի շարք դժվարություններ, իսկ ժամանակը գործնականում երբեք հավերժության կարգույթից առանձին չի դիտարկվել: Հավերժությունը, որ բնորոշ է Աստծո էությանը՝ «Աստված հավիտենական է, և Աստծո մեջ չկա ստացական [մի բան], հույժ կատարյալ է», **(«Ոսկեփորիկ», 1746)** գտնվում է հասկանալի իրականության ամենաբարձր մակարդակներում և մարմնավորում է դրա միասնությունը՝ որպես անչափելի կետ կամ հավերժական ներկա, իսկ ժամանակը տարբերվում է մեկնարկային կետով և իրականության հետ փոխկապակցվածության տարամակարդակով՝ դրա մեջ արտացոլելով աշխարհի և մարդկության պատմության քրիստոնեական պատկերը:

Ուսումնասիրելով հավերժության գոյաբանական կարգավիճակը Տաթևացու փիլիսոփայության մեջ՝ ակնհայտ է, որ փիլիսոփան և աստվածաբանն այն ավելի բարձր են գնահատում, քան ժամանակի կարգավիճակը, քանի որ ժամանակը շարժվում է և այն անկատար է: Տաթևացին պնդում է. «Թե այն, ինչ շարժվում և փոփոխվում է, անկատար է, որովհետև երբ շարժվում և փոփոխվում է, կորցնում է այն, ինչ ուներ, և ստանում այն, ինչ չուներ» **(«Ոսկեփորիկ», 1746)**, իր հերթին կատարյալ է հավիտենականությունը, որում չարարված, չծնված, սկիզբ չունեցող Աստված գտնվում է աշխարհի հանդեպ լիակատար անդրանցականությանն մեջ. «Հարկ է, որ այդ առարկան ունենա համակ կատարյալ մի Էություն՝ անշարժ,

անփոփոխ և անմահ, և այն Աստված [ինքն] է» **(«Ոսկեփորիկ», 1746)**: Ելնելով դրանից՝ կարելի է եզրակացնել, որ Տաթևացին հակադրում է ժամանակային կարգույթները և սահմանում դրանց արժեքային նվիրապետությունը: Չնայած այն հանգամանքին, որ արժեքաբանությունը՝ որպես փիլիսոփայական գիտություն, ձևավորվել է բոլորովին վերջերս (XIX-XXդդ.) և հատկապես միջնադարում փիլիսոփայական մտորումների առարկա չի եղել, հեղինակն այնուամենայնիվ ունի արժեքաբանական ուղղվածություն: Սա մեզ թույլ է տալիս պնդել, որ արժեքաբանությունը գոյություն է ունեցել փիլիսոփայության ոլորտում, բայց միայն միասնաբար այլ խնդիրների հետ, որոնք անմիջապես չեն բացահայտվել որպես այդպիսիք: Արժեքային երևույթների ըմբռնման վերաբերյալ հոգևոր աշխատանքը սկսվել է անտիկ դարաշրջանում, շարունակվել միջնադարում, իսկ հետո նոր ժամանակներում: Եվ միայն նոր ժամանակներում գիտության մեջ առաջին փորձն արվեց սահմանազատում կատարել շրջակա աշխարհի արժեքային և օբյեկտիվ հատկությունների, ճանաչողության և գնահատման միջև (**Мирошников Ю., 1993**):

Ժամանակի ընկալման մեջ Գր. Տաթևացին, ինչպես և Արիստոտելը, հարում են հարաբերական հայեցակարգին, և եթե վերջինս հավերժությանը տվել է ինքնուրույն բնութագրում, ապա հայ փիլիսոփա-աստվածաբանը ժամանակի մասին ասում է, որ այն չի կարող լինել ինքնուրույն գոյություն ունեցող և անփոփոխ, այլ սկսում է իր շարժումը և առաջանում որպես ավելի հիմնարար էության ածանցյալ՝ առաջին և մեկ շարժումից՝ Հիմնաշարժիչից, և հետևաբար չի կարող գոյություն ունենալ առանց Աստվածային հարթության տարածության հետ փոխկապակցվածության. «...ուրեմն առաջին շարժումը, որ մշտաշարժ և կարգավոր է, հարկավ պետք է, որ մի շարժումից շարժվի, և այն առաջին շարժողն Աստված է, հետևաբար պարտ է, որ մեկ Աստված լինի» **(«Ոսկեփորիկ», 1746)**: Այսինքն՝ ժամանակը գոյություն ունի բացառապես այն դեպքում, եթե կա փոփոխություն և շարժում: Ցանկացած փոփոխություն՝ լինի դա ներքին, թե արտաքին, ժամանակն է:

Ժամանակի խնդրին Գր. Տաթևացին անդրադարձել է նաև Երրորդության իր աստվածաբանության մեջ: Այս դավանանքում ժամանակը կարելի է դիտարկել և՛ որպես կապ, և՛ արժեքաբանություն միմյանց հետ: Հանդես գալով արիոսականության գաղափարի դեմ, որ խոսում է ժամանակային նվիրապետության կառուցվածքի մասին, որտեղ Հայրը, գերակա լինելով Որդու նկատմամբ, ժամանակին ծնում է Նրան, Տաթևացին պնդում է. «Խոստովանել Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն. Հորը՝ անծին և անսկիզբ, Որդուն՝ Հորից ծննդով սկսված, Հոգուն՝ բխումով և դուրս գալով՝ ոչ [թե] ժամանակով և հետո եղած, քանզի անժամանակ էությունը ժամանակից հետո չի սկսվում, քանզի թեպետ Որդին Հոր ծնունդ է, սկսված լինելով Հորից, բայց թե ժամանակի մեջ, ապա թե ոչ նրան անսկիզբ կհամարես, քանզի Հորից անսկզբնաբար է սկսվում անսկիզբը՝ նրան մշանջենավորակից» **(«Ոսկեփորիկ», 1746)**: Սուրբ Երրորդությունը գոյություն ունի որպես ամբողջություն, կայուն է ժամանակի մեջ և չի ենթարկվում որևէ փոփոխության: Երրորդության մասին քրիստոնեական վարդապետության պատմական, ուղղափառ ըմբռնումն այն է, որ գոյաբանական Երրորդության մեջ, հավերժության մեջ և արարումից առաջ, Որդին ամեն ինչում հավասար է Հորը: Ժամանակի և տարածության մեջ, մարմնավորման ընթացքում և հանուն մարդու փրկագնման նպատակների, Որդին կամավոր կերպով (գործառույթով, ոչ թե էությամբ) իրեն հանձնեց Հորը. Երրորդության այս արտահայտությունը արձանագրված է Եկեղեցու հայրերի կողմից, որին հետևում էր Գր. Տաթևացին: Հավիտենական Աստված Որդու միջոցով մտնում է ժամանակի և պատմության մեջ: Մարմնավորումը Ծնունդը, Խաչելությունը և Հարությունը եզակիորեն կատարվում են մեկ անգամ և միևնույն ժամանակ՝ ընդմիշտ **(Davies P., 1982)**: Այսպիսով, այս բոլոր իրադարձությունները ներկայացնում են արժեքաբանական իմաստ, որն ընկած է Գրիգոր Տաթևացու ստեղծագործության ժամանակային և ոչ ժամանակային իմաստային և արժեքային ուղենիշների համակարգի հիմքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, Գր. Տաթևացու ժամանակի հայեցակարգը ձևավորվել է անտիկ փիլիսոփաների, մասնավորապես Արիստոտելի ազդեցության ներքո: Ինչպես և ողջ միջնադարյան փիլիսոփայությունը և արևելաքրիստոնեական ավանդույթը ժառանգելով անտիկ դարաշրջանի՝ նորպլատոնականության և հայրաբանական գրականության գաղափարները, մեծ գիտնական և աստվածաբանն էզզեգետիկ հերմենևտիկայի միջոցով կարողացավ անտիկ ժառանգության փոխներհյուսել ժամանակի և հավերժության քրիստոնեական ըմբռնման հետ: Լինելով XIV-XV դարերում ապրած փիլիսոփա-աստվածաբան՝ նա բացահայտեց տիեզերքի բարդ, նվիրապետական համակարգը՝ դրանով իսկ ժամանակի և հավերժության հասկացություններին տալով արժեքաբանական կողմնորոշում, մասնավորապես բարդացնելով հավերժության մասին պատկերացումները՝ բաժանելով այն չորս կարգույթների: Լինելով հայրաբանության հավատարիմ հետևորդ՝ Տաթևացին խոսում է սկզբունքորեն այլ գոյաբանական, Աստծո բացարձակ ինքնատիպ, նմանը չունեցող հավերժության մասին: Արարված գոյության մեջ չկա ոչ մի հավերժական բան բառիս բուն իմաստով, և ոչ միայն այն պատճառով, որ արարվածն ունի իր գոյության ժամանակային սկիզբը, այլ նաև քանի որ չլինելով ինքնատիպ՝ այն Արարչի մշտական «աջակցության» կարիքն ունի **(Мейендорф И., 2001)**: Աստված ստեղծեց միայն մեկ՝ արդարներին դեպի փրկություն տանող եզակի իրադարձությունների շարժման փուլ: Աշխարհը պետք է «իրագործվի» ժամանակի ընթացքում, հաղթահարի իրերի տեղաշարժը պատմության մեջ: Ժամանակն անշրջելիորեն գոյություն ունի տարածության մեջ, այն նաև անշրջելիորեն մոտենում է իր ավարտին, ինչը, անշուշտ, ներկա պահից ավելի կարևոր է, և այն տանում է լոկ դեպի իր վերջը, որը մատնանշում է պատմության ավարտը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **«Ոսկեփորիկ» (1746)**, Պոլիս, Աբրահամ Թրակացի տպարան:

2. **Քյոսեան Հ. (1995)**, Գրիգոր Տաթևացի, Ոսկեփորիկ, Թարգմանություն և ծանոթագրությունները, Երևան, «Գթություն» հրատ.:
3. **Зайцев А.** (**2022**), Историческое развитие христианского учения о вечности https://azbyka.ru/istoricheskoe-razvitie-xristianskogo-ucheniya-o-vechnosti#ch_0_3
4. **Закарян С. (2017),** Аристотелизм в средневековой армянской философии. Сборник материалов конференции «Наследие Аристотеля в контексте армянской культуры», ЕГУ, с. 10-22.
5. **Зима В**. **(2008**), Категории времени и вечности в средневековой философии. https://cyberleninka.ru/article/n/kategorii-vremeni-i-vechnosti-v-srednevekovoy-filosofii/viewer
6. **Мейендорф И. (2001),** Византийское богословие. Исторические тенденции и доктринальные темы, Пер. с англ. В. Марутик., Минск.
7. **Мирошников Ю.** (**1993**), История аксиологии от Платона до Канта. Электронный научный ресурс УрФу. https://elar.urfu.ru/bitstream/10995/89745/1/5-7525-1621-8_008.pdf
8. **Шпенглер О**. **(1993),** Закат Европы, в 2 т., Москва, “Мысль”.
9. **Davies P. (1982),** God and the New Physics, N.Y., Православная энциклопедия, Т 9
10. **Fuller B. A. G. (1907),** The Theory of God in Book of Aristotel's Metaphisics, The Philosophical Rewiew., Vol 16., No 2 (Mar.)

REFERENCES

1. **“Voskeporik. (1746),** Constantinople, Abraham Trakatsi Printing House.
2. **Kyosian H. (1995),** Grigor Tatevatsi, Voskeporik, Translation and annotation, “Gtutyun” Publishing House, Yerevan.
3. **Zaitsev A. (2022),** Istoricheskoye razvitiye khristianskogo ucheniya o vechnosti /Historical development of the Christian doctrine of eternity/.

https://azbyka.ru/istoricheskoe-razvitie-xristianskogo-ucheniya-o-vechnosti#ch_0_3

4. **Zakaryan S. (2017),** Aristotelizm v srednevekovoy armyanskoy filosofii /Aristotelianism in medieval Armenian philosophy/. Collection of materials from the conference "Aristotle's legacy in the context of Armenian culture", Yerevan State University. 2017, p. 10-22.
5. **Zima V. (2008),** Категории времени и вечности в средневековой философии /Categories of time and eternity in medieval philosophy/. https://cyberleninka.ru/article/n/kategorii-vremeni-i-vechnosti-v-srednevekovoy-filosofii/viewer
6. **Meyendorff I. (2001),** Vizantiyskoye bogosloviye. Istoricheskiye tendentsii i doktrinal'nyye temy /Byzantine theology/. Historical trends and doctrinal themes, Translated from English by V. Marutik., Minsk.
7. **Miroshnikov Yu. (1993),** Istoriya aksiologii ot Platona do Kanta /History of Axiology from Plato to Kant/. UrFU Electronic Scientific Resource. https://elar.urfu.ru/bitstream/10995/89745/1/5-7525-1621-8_008.pdf
8. **Spengler O. (1993),** Zakat Yevropy /The Decline of Europe/: in 2 volumes. Moscow, Mysl'.
9. **Davies P. (1982),** God and the New Physics, N.Y., 1982 Orthodox Encyclopedia, Vol. 9
10. **Fuller B. A. G. (1907),** “The Theory of God in the Book of Aristotle's Metaphysics.”, The Philosophical Review., Vol 16., No. 2 (Mar.)

Арусяк Ширинян

Категории времени и вечности в «Златочреве» Грогория Татеваци

Заключение

Ключевые слова и выражения: *Гр. Татеваци, вечность, время, онтология, аксиология, аристотелизм, неоплатонизм, патристика армянская средневековая философия, наука.*

Одной из фундаментальных категорий в философии и в богословии является понятие восприятия времени. В парадигме армянской философской и богословской традиций, постановка такого вопроса в концептуальном плане остается мало изученной. Наследие армянских средневековых мыслителей о концепциях времени, хоть и незначительные, но по сей день остается почти нетронутым цивилизацией, что изымает его из всеобщей истории развития секулярного дискурса о проблеме времени, а по большей части существование национальных особенностей и традиций просто подвергаются сомнению. В следствии такого положения концепции времени и вечности в армянской средневековой философии долгое время не рассматривались и не изучались как самостоятельная дисциплина средневековой философии, а всего лишь упоминались, как вспомогательное средство для построения картины мира. Статья посвящена выявлению и рассмотрению основных аспектов представлений о времени и вечности армянского средневекового философа-богослова Григория Татеваци, изложенных в труде «Ոսկեփորիկ». В статье предпринята попытка логико –философского анализа вечности и времени с целью очертить основные актуальные вопросы. Показана взаимосвязь категорий времени и вечности в армянской средневековой философии с философской традицией античности и с средневековой восточно–христианской традицией. Данная статья выполнена на пересечении философии и теологии, где время и вечность В труде Григория Татеваци «Ոսկեփորիկ», анализируются с точки зрения онтологии, а также предпринята попытка показать их аксиологическую направленность.

Arusyak Shirinyan

Categories of Time and Eternity in Grigor Tatevatsi's "Voskeporik"

Conclusion

Key words and expressions: *Gr. Tatevatsi, eternity, time, ontology, axiology, Aristotelianism, Neoplatonism, patristics, Armenian medieval philosophy, science.*

Time perception is one of fundamental categories in theology and philosophy. The formulation of such a question, in the paradigm of the Armenian philosophical and theological tradition, remains superficially researched. Although insignificant, the legacy of Armenian Medieval thinkers on the concepts of time remain almost untouched by civilisation up to this day, which removes it from the general history of the development of secular discourse on the matter of time and mostly simply questions national characteristics and traditions. As a result the concepts of time and eternity in Armenian medieval philosophy were not studied for a long time as an independent discipline of medieval philosophy, but were only mentioned as an auxiliary means for building a peace picture of the world. The article is dedicated to identification and consideration of the main aspects of the ideas about time and eternity of the Armenian medieval philosopher-theologian Gregory Tatevatsi, set out in the scientific endeavour "Ոսկեփորիկ". The article makes an attempt of a logical and philosophical analysis of eternity and time in order to outline the main current issues. The relationship between the categories of time and eternity in Armenian medieval philosophy with the philosophical tradition of antiquity and with the medieval Eastern Christian tradition is shown. This article is written at the intersection of philosophy and theology, where time and eternity are analyzed from the point of view of ontology in the book "Ոսկեփորիկ" authored by Grigory Tatevatsi, and an attempt is made to show their axiological orientation.

Արուսյակ Շիրինյան – ԵՊՀ Աստվածաբանական և Հայ եկեղեցու պատմության ամբիոնի հայցորդ, դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ փիլիսոփայություն, հայ հոգևոր գրականություն, պատմություն, ժամանակի հերմենևտիկա: Հեղինակ է 1 գրքի և 4 հոդվածների. *arusyak.shirinyan@ysu.am*

Арусяк Ширинян – Соискатель, преподаватель ЕГУ. Научные интересы: философия, история, армянская духовная литература, герменевтика времени. Автор 1 книги и 4 статей: *arusyak.shirinyan@ysu.am*

Arusyak Shirinyan – Applicant at YSU, lecturer of YSU, Scientific interests: philosophy, history of Armenian spiritual literature, history, hermeneutics of time. Author of 1 book and 4 article. arusyak.shirinyan@ysu.am

Խմբագրություն է ուղարկվել 20.01.2025թ.
Հանձնարարվել է գրախոսության 06.02.2025թ.
Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ.